

# TRANSITIONS



## Մտավոր/գարգացման հաշմանդամություն ունեցող Ձեր մեծահասակ երեխայի ինամբը

Համառոտ ուղեցույց առողջական ինամբի արտոնությունների, իրավական հնարավորությունների և օգտակար ծառայությունների մասին, որոնցից կարող են օգտվել այն ծնողները, ովքեր մտավոր/գարգացման հաշմանդամություն ունեցող մեծահասակ երեխա են ինամուլ



**BET TZEDEK**  
JUSTICE FOR ALL

323-939-0506

[WWW.BETTZEDEK.ORG](http://WWW.BETTZEDEK.ORG)



## Bet Tzedek-ի Transitions ծրագիր

Ձեր մեծահասակ երեխայի համար ապահով, առողջ ու իմաստալից  
կյանքով ապրելու հնարավորություն

[www.bettzedek.org](http://www.bettzedek.org)

**Ի**րևաբանական/զարգացման հաշմանդամություն (intellectual/developmental disability, I/DD) ունեցող անձի ծնող, Դուք տարիներ շարունակ խնամք, սեր ու օժանդակություն եք տրամադրել Ձեր երեխային: Տարիքի հետ, երկուսդ էլ նոր մարտահրավերների ու խնդիրների եք հանդիպում: Ձեր մեծահասակ երեխայի փոփոխվող կարիքներն ակնկալելն ու ապագային նախապատրաստվելը կոյուրացնի բոլոր ներգրավված կողմերի խնդիրը: Bet Tzedek-ի Transitions (Անցումներ) ծրագիրը ճանաչում է այդ բարդ կարիքներն ու առաջին անգամ մեկտեղ է բերում մասնագետներին, ծնողներին ու պետական գործակալություններին՝ ստեղծելու խնամքի համակարգված մի շրջանակ, որի օգնությամբ հնարավոր կլինի լուծել թե՛ տարիքային առաջխաղացման, և թե՛ հաշմանդամության խնդիրները: Այս գրքուկը Ձեզ ընդհանուր պատկերացում կտա առկա ծառայությունների ու ռեսուրսների մասին:

## Առողջական խնամքի ծրագրեր

**MEDI-CAL.** Կալիֆորնիայի բժշկական ապահովագրության ծրագիր (այլ նահանգներում կոչվում է Medicaid), որն օգնում է ցածր եկամուտ ունեցող անհատներին, ընտանիքներին, տարեցներին ու հաշմանդամություն ունեցող անձանց: Այն վճարում է հոսպիտալացման, բժշկական այցերի, բժշկական սարքավորման/սյուրթերի և դեղատոմսային դեղորայքի, ինչպես նաև թերապևտիկ ծառայությունների համար, օրինակ՝ խոսքային թերապիա, աշխատանքային թերապիա և ֆիզիոթերապիա: Իրավունակության նպատակներով, հաշմանդամություն ունեցող մեծահասակ անձի ցանկացած եկամուտ կարող է նկատի առնվել ընտանիքի մնացած անդամների եկամտից առանձին:

**MEDICARE.** Դաշնային բժշկական ապահովագրության ծրագիր 65 տարեկանից ավելի ավագ անձանց, կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Medicare-ը վճարում է հոսպիտալացման, բժշկական այցերի, բժշկական սարքավորման/սյուրթերի և դեղատոմսային որոշ դեղորայքի համար: Ոմանք, ովքեր կարող են ունենալ թե՛ Medi-Cal-ի, և թե՛ Medicare-ի որակավորում, երբեմն կոչվում են «Կրկնակի իրավունակություն ունեցող»:

## Ֆինանսական օժանդակություն

**ՏԱՆՅԻՆ ՕԺԱՆԴԱԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (IN-HOME SUPPORTIVE SERVICES, IHSS).** Կալիֆորնիայի տնային խնամքի ծրագիրն է ցածր եկամուտ ունեցող այն անձանց համար, ովքեր կուրություն կամ հաշմանդամություն ունեն, կամ 65-ից ավելի բարձր տարիքի են: Ծրագիրը կառավարվում է Լոս Անջելես քառնթիի Սոցիալական ծառայությունների վարչության կողմից: IHSS-ը վճարում է ամենօրյա տնային խնամքի ծառայությունների, օրինակ՝ լոգանքի, զուգարանի, անձնական հիգիենայի, գնումների, կամ կերակուր պատրաստելու համար, այն անձանց, ովքեր

սեփական կարիքներն ի վիճակի չեն ինքնուրույն հոգալ: Տրամադրվող ժամաքանակը ելևում է ծառայությունների օգտատիրոջ կարիքի աստիճանից, ելթակա է առավելագույն ժամաքանակի սահմանափակման, և կարող է օգտագործվել՝ ընտանիքին անդամի կողմից տրամադրվող ծառայությունների վճարման համար:

**ԿԱՐՃԱԺԱՄՎԵՏ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ (ՌԵՍՓԻԹՅԻՆ) ԽՆԱՄՔ.** Ծրագրեր, որոնք վճարում են երրորդ անձանց կողմից խնամքի ծառայությունների համար, որպեսզի ընտանիքի անդամները փոքր-ինչ ընդմիջում վերցնեն: Կարճաժամկետ վերականգնողական (ռեսփիթային) խնամքը հաճախ վճարվում է Տարածաշրջանային կենտրոնի կողմից, եթե մեծահասակ երեխան ունի այդ ծառայության իրավունակություն և որակավորում:

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՂԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ/SSI.** Դաշնային ծրագրեր, որոնք ամսական վճարումներ են հատկացնում 62 տարեկան դարձած թոշակառուներին, ինչպես նաև ծանր հաշմանդամություն ունեցող երեխաներին ու մեծահասակներին: Հաշմանդամություն ունեցող Ձեր մեծահասակ երեխային որակավորելու համար անհրաժեշտ է ներկայացնել փաստաթղթեր, որոնք ցույց կտան, որ խնդրո առարկա առողջական վիճակը հանգեցնում է ցանկացած կարգի աշխատանք կատարելու անկարողության, և որ այն տևել է, կամ ակնկալվում է, որ կարող է տևել առնվազն մեկ տարի: **Մասնակի հաշմանդամության կամ կարճաժամկետ հաշմանդամության համար փոխհատուցելի արտոնություն չի նախատեսված:**

Ձանգահարե՛ք (անվճար) 800-772-1213, երկուշաբթի-ուրբաթ, ժ. 07:00-19:00, կամ այցելե՛ք [www.ssa.gov/disability/disability\\_starter\\_kits\\_adult\\_eng.htm](http://www.ssa.gov/disability/disability_starter_kits_adult_eng.htm):

## Իրավական խնդիրներ

**ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.** Երբ Ձեր երեխայի 18 տարեկանը լրանա, նա կդառնա մեծահասակ ու կունենա սեփական որոշումներ կայացնելու իրավական իրավունք: Եթե նա որոշում կայացնելու կարողություն չունի, ապա կարող եք դիմել ժառանգության գործերով դատարան՝ Սահմանափակ խնամակալության հաստատման խնդրանքով: Սա Ձեզ (խնամակալին) իրավասություն կտա անձնական ու ֆինանսական որոշումներ կայացնել Ձեր մեծահասակ երեխայի (խնամյալի) համար, ընդ որում հետևյալի մասին.

- 1) Որտե՞ղ պետք է նա բնակվի (բացառությամբ փակ հաստատությունների)
- 2) Խորհրդապահական գրառումներից ու փաստաթղթերից օգտվելու իրավասությունը
- 3) Իրավական պայմանագրային հարաբերություն ստեղծելու իրավունքը
- 4) Բժշկական որոշումներին համաձայնություն տալը (բացառությամբ ստերջացման)



- 5) Կրթական կամ աշխատանքային կատարելագործումն ու վերապատրաստումը
- 6) Համապատասխան հանրային ու սեռական կապերը սահմանելը
- 7) Ամուսնության որոշմանը համաձայնություն տալը

Դատարանի կողմից այս իրավասությունները ստանալու դիմաց, ինամակալը պատասխանատու է ապահովել այն բուժումները, ծառայություններն ու հնարավորությունները, որոնք կօգնեն ինամյալին՝ հասնել առավելագույն անկախության:

Եթե ցանկանում եք հավելյալ տեղեկատվություն ստանալ 18 տարեկանից ավագ Ձեր մեծահասակ երեխայի նկատմամբ սահմանափակ ինամակալություն ձևակերպելու վերաբերյալ, պապ այցելե՛ք [www.betzedeck.org/services/guardianships-and-conservatorships](http://www.betzedeck.org/services/guardianships-and-conservatorships), կամ զանգահարե՛ք Bet Tzedek՝ 323-939-0506:

**ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԼԻԱԶՈՐԱԳԻՐ.** Բարձր գործունակության, մեծահասակ, զարգացման հաշմանդամություն ունեցող անձը կարող է սեփական ընտրությամբ իր ծնողներին, կամ այլ հարազատների լիազորել խոսել իր անուևից բժշկական մատակարարների հետ: Լիազորագրում կարող են նաև նշվել առողջական ինամքի կոնկրետ ցուցումներ:

**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՎԱԿԱՆ ԼԻԱԶՈՐԱԳԻՐ.** Նման է վերը նշվածին, սակայն վերաբերում է իրավական ու ֆինանսական որոշումներին, օրինակ՝ հաշվեգրերի վճարում, կամ պայմանագրերի ստորագրում:

**ՎՃԱՐՎՈՐ ԿՈՐՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ.** Անձ, ով մեկ այլ անձի օգնում է կառավարել SSI-ը կամ սոցիալական ապահովագրության վճարման չեքերը: Վճարվող կողմի ներկայացուցիչը կարող է լինել ընտանիքի անդամ, ոչ-շահութաբեր կազմակերպություն, ընկեր, կամ Տարածաշրջանային կենտրոնի սպասարկման համակարգողը:

# Աջակցություն, զբաղվածություն և կեցություն

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ/ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**SARAFUSADIRZANAMZIR YETSRONLTER.** Եթե Ձեր I/DD ունեցող մեծահասակ երեխան գրանցված է Տարածաշրջանային կենտրոնում, ապա անհրաժեշտ է կանոնավոր կերպով խոսել Ձեզ կցված Սպասարկման համակարգողի հետ ու մասնակցել տարեկան IPP-ի գործընթացին (Անհատական պլանավորում): Ձեր մեծահասակ երեխան պետք է մասնակցի այդ հանդիպումներին: .

Եթե Ձեր I/DD ունեցող մեծահասակ երեխան երբեք Տարածաշրջանային կենտրոնում գրանցված չի եղել, կամ նրան մերժվել է ծառայությունների տրամադրումը, ապա խնդրում ենք դիմել Disability Rights California (անվճար)՝ 800-776-5746 (ձայնային) կամ 800-719-5798 (ստորագրության բարդություն ունեցող անձանց համար), կամ այցելել [www.disabilityrightscalifornia.org](http://www.disabilityrightscalifornia.org):

## ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Կալիֆորնիայի վերականգնողական ծառայությունների վարչությունը (California Department of Rehabilitation) ծառայություններ և քարոզչություն է իրականացնում հոգևոր և ֆիզիկական ծանր հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, անկախ կենսակերպի և հավասարության:

Լուս Անջելես քառնաթիում կարող եք այցելել յոթ գրասենյակից որևէ մեկը. [www.rehab.cahwnet.gov/dor-locations/code/county.asp?county=Los-Angeles](http://www.rehab.cahwnet.gov/dor-locations/code/county.asp?county=Los-Angeles), կամ զանգահարել (անվճար) 800-952-5544 (ձայնային), 866-712-1085 (ստորագրության բարդություն ունեցող անձանց համար):

## ԱՎԵԼԻ ԼՈՒՐԶ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ,

Կալիֆորնիայի Զարգացման հաշմանդամության հարցերով վարչությունն առաջարկում է Աշխատանքային ծառայությունների ծրագիրը (Work Services Program), որը զբաղվածության և համայնքային ինտեգրացման հնարավորություններ է տալիս Զբաղվածության օժանդակ ծրագրերի (Supported Employment Programs, SEP) և Աշխատանքային գործունեության ծրագրերի (Work Activity Programs, WAP) միջոցով: Այս ծրագրերը հասանելի են միայն այն անձանց, ովքեր Տարածաշրջանային կենտրոնի հաճախորդ են: Հավելյալ տեղեկատվության համար այցելե՛ք [www.dds.ca.gov/ConsumerCorner/EmployFamResources.cfm](http://www.dds.ca.gov/ConsumerCorner/EmployFamResources.cfm), կամ զանգահարե՛ք 916-654-1690 (ձայնային), կամ 916-654-2054 (ստորագրության բարդություն ունեցող անձանց համար):

## ՀԱՎԵԼՅԱԼ ԱԾԻՆԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԳՏՆԵԼ ԱՅՍՏԵՂ.

**Best Buddies CA:** [www.bestbuddiescalifornia.org](http://www.bestbuddiescalifornia.org)

**The ARC:** [www.arcself.org/employment\\_services.html](http://www.arcself.org/employment_services.html)

**Easter Seals:** [www.southerncaleasterseals.com](http://www.southerncaleasterseals.com)

**Goodwill Industries:** [www.goodwillsocal.org](http://www.goodwillsocal.org)

**TASC (Adult Skills Center):** [www.taschq.com](http://www.taschq.com)

**Tierra del Sol Foundation:** [www.tierradelosol.org](http://www.tierradelosol.org), կամ (818) 352-1419

## ԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Չարգացման հաշմանդամություն ունեցող մեծահասակ անձինք կեցության մի շարք հնարավորություններ ունեն, ընդ որում.

1) **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** (հաճախ կոչվում են «խմբային տներ»), որոնք Կալիֆորնիայի Լահանգի կողմից արտոնագրված են: Այս հաստատությունները (3-ից 6 անձ, ըստ խնամքի մակարդակի) շուրջօրյա ոչ-բժշկական խնամք են տրամադրում երեխաներին ու մեծահասակներին, ովքեր անվտանգության կամ առօրյա գործողությունների բերումով անհատական սպասարկման, վերահսկողության և/կամ օգնության կարիք ունեն: Խնամքի չորս մակարդակ կա՝ ըստ անձի կարիքների: [www.dds.ca.gov/LivingArrang/CCF.cfm](http://www.dds.ca.gov/LivingArrang/CCF.cfm)

2) **ԱՆԿԱՆ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ** վերահսկվում են տարածաշրջանային կենտրոնների կողմից, և տրամադրում կամ համակարգում են անհատների օժանդակ սպասարկումն անկախ կեցության պայմաններում: Դրանց խնդիրն է՝ մեծահասակներին սովորեցնել հոգալ սեփական կարիքները, իսկ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց անհատական կարիքները հոգալու համար կարող են օգնականներ վարձվել: [www.supportedliving.com/index.html](http://www.supportedliving.com/index.html)

3) **ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (FAMILY HOME AGENCIES, FHA)** նորամուծություն են: Դրանք

զարգացման հաշմանդամություն ունեցող անձանց կապում են հյուրընկալ ընտանիքների հետ՝ ձևավորելով ինքնորոշման ու փոխադարձ կախվածություն բարենպաստ միջավայր: Սրանք ընտանեկան օջախներ են զարգացման հաշմանդամություն ունեցող մեկ կամ երկու մեծահասակի համար, ովքեր ապրում են իրենց ընտանեկան օջախից դուրս, մեկ այլ ընտանիքում: հավելյալ տեղեկատվության համար դիմե՛ք Ձեր տեղական Տարածաշրջանային կենտրոնին:



4) **ՕՃԱՆԴԱԿ ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ** Լախաստեսված է այն տարեց անձանց համար, ովքեր որոշ օժանդակության կարիք ունեն իրենց առօրյա գործողությունները կատարելիս, օրինակ՝ հազնվելիս ու լոգանք ընդունելիս, սակայն նաև ցանկանում են հնարավորինս անկախ կյանք վարել: Օժանդակ կեցությունը հարմար է այն անձի համար, ով տանը կամ անկախ կեցության պայմաններում ապրելու համար չափազանց տկար է, սակայն մասնագիտացված բուժակային խնամքի կարիք չունի: Միայն 59 տարեկանից ավագ մեծահասակների համար. [www.calregistry.com/index.htm](http://www.calregistry.com/index.htm)

Transitions (Անցումներ) ծրագիրը Bet Tzedek Legal Services-ի  
Նախաձեռնություններից է, և Նպատակ ունի լուծումներ ու  
համակարգված, ամբողջական խնամք մշակել 30 տարեկանից  
ավագ, մտավոր/գարգացման հաշմանդամություն ունեցող  
մեծահասակների ու նրանց ընտանիքի անդամ հանդիսացող,  
իրենց տարիքն առնող խնամակալների համար:

Նախնական ֆինանսավորումը



Հավելյալ տեղեկատվության համար այցելե՛ք.  
[www.bettzedek.org](http://www.bettzedek.org)



323-939-0506

[WWW.BETTZEDEK.ORG](http://WWW.BETTZEDEK.ORG)